

Բ. Վերգյաև

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հայ քերականության պատմության մեջ դերանուն են համարվել այն բոլոր բառերը, որոնք գրվում են անվան փոխարեն: Բայց որովհետև անուն ասելով տարրեր քերականներ հասկացել են կամ գոյականներ, կամ գոյականն ու ածականը, կամ գոյականը, ածականն ու թվականը միասին, ապա դերանունն էլ համապատասխանաբար ոմանք համարել են միայն գոյականին փոխարինող, ոմանք՝ գոյականին ու ածականին փոխարինող, իսկ ոմանք էլ՝ գոյականին, ածականին և թվականին փոխարինող խոսքի մաս:

Քննական քերականություն աշխարհաբար կամ արգի հայերեն լեզվի աշխատության մեջ Ա. Այտընյանը դերանվան սահմանումի մեջ գրում է, թե այդ խոսքի մասը փոխարինում է միայն գոյականին՝ «գոյական անունը շատ չկրկնելու համար» (էջ 38), բայց հետո դերանունները բաժանում է երկու հիմնական տեսակի՝ գոյական և ածական, հայտնելով այն միաժքը, թե «ինչպես անունը, նույնպես դերանունն ալ երկու տեսակ է 1. գոյական դերանուն, և 2. ածական դերանուն» (նույնը):

Ս. Պալասանյանի մոտ այսպիսի հակասություն չկա: Նա և՛ դերանվան սահմանումի, և՛ դասակարգման մեջ հայտնում է այն կարծիքը, թե դերանունները փոխարինում են գոյականին ու ածականին: Բերանվան հարցում Պալասանյանին են հետևում հայ քերականների մեծ մասը (Գ. Վանցյան, Ա. Արարաջյան, Հար. Թումանյան, Ն. Դադրաշյան և ուրիշներ): Դերանվան այսպիսի ըմբռնումը նոր չէ և գալիս է դեռևս ինչ նույններից ու հոռմեացիներից: Հենց «դերանուն» բառը ցույց է տալիս, որ հներն այդ խոսքի մասի տակ հասկացել են անվան դեր կատարող, անվանը փոխարինող բառերը (դեր-անուն, место-имение):

Սակայն դերանվան այս տրագիցիոն ըմբռնումը խիստ քննադատության ենթարկվեց և մերժվեց դեռևս անցյալ դարի առաջին կեսում եվրոպական և ուսական մի շարք լեզվաբանների կողմից: «Դերանունը բոլորովին էլ առանձին խոսքի մաս չի հանդիսանում»¹ 1839 թվին գրում է Կ. Ս. Ակսակովը՝ Վ. Գ. Բելինսկու քերականության կապակցությամբ: Նույն կարծիքին են Գ. Պավսկին և ակադ. Ի. Ի. Դավիդովը: «Սխալ է դերանունը առարկայի անվան փոխարեն գրվող խոսքի մաս կոչելը»²—գրում է վերջինս: Ակադ. Ա. Ա. Պոտեբնյան, հետևելով Շտեյնտալին, գտնում է, որ դերանունը ինքնուրույն խոսքի մաս չէ, որ նա ոչ

¹ К. С. Аксаков, Полное собрание сочинений, т. II, Сочинения филологические, ч. I, Москва, 1875, стр. 7.

² И. И. Давыдов, Опыт общесравнительной грамматики русского языка, стр. 207, см. В. В. Виноградов, Русский язык, Москва, 1947, стр. 319.

առարկա է նշանակում, ոչ առարկայի հատկանիշ կամ քանակ, այլ միայն անորոշ, տարտամ ձևով մատնանշում է, ակնարկում դրանք:

Հետևելով երիտքերականներին, պրոֆ. Մ. Արեղյանը ընդհանրապես առարկայի գաղափար արտահայտող բոլոր բառերը, այդ թվում նաև դերանունները համարում է գոյական (ճանուն և դերանուն): Այսպիսով նա փաստորեն ժխտում է դերանվան՝ առանձին խոսքի մասինները և այն տարալուծում է գոյականների, ածականների և մակբայների մեջ:

Ռուսական և եվրոպական գիտնականներից շատերը դերանունն առանձին խոսքի մաս չեն համարում, որովհետև դանում են, որ նա չունի քերականական ինքնուրույն ձև և արտահայտվում է այն խոսքի մասի ձևով, որին փոխարինում է (գոյական, ածական, թվական և մակբայ): Սակայն հիմնական առարկությունն այն է, որ դերանունը իբր թե շարահյուսական կատեգորիա է, որ այն որոշվում է լոկ նախադասություն մեջ այս կամ այն խոսքի մասին փոխարինելու շարահյուսական պաշտոնով:

Բրոք, այն քերականները, որոնք դերանունն առանձին խոսքի մաս են համարում, հիմք են ընդունում ոչ թե նրա արտահայտած իմաստը, այլ ֆունկցիան՝ նախադասության մեջ գոյականին, ածականին, թվականին և մակբային փոխարինելու հանգամանքը:

Դերանուններն իրենց արտահայտած իմաստով իրոք կարելի է բաժանել 4 հիմնական խմբի՝ 1. առարկա ցույց տվող, 2. առարկաների զանազան հատկանիշներ, որակ, որպիսություն ցույց տվող, 3. թվի, չափի ու քանակի գաղափար արտահայտող և 4. գործողության հատկանիշ արտահայտող դերանուններ: Այս խմբերը համապատասխանում են գոյականին, ածականին, թվականին ու մակբային, սակայն երբեք չեն նույնանում նրանց հետ:

Առանձին-առանձին քննարկենք այդ խմբերը՝ համեմատելով իրենց համապատասխան խոսքի մասերի հետ:

1. ԱՌԱՐԿԱ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Առարկա ցույց տվող դերանունները մեջ են մտնում ամենից առաջ անձնական դերանունները (ես, դու, նա, մենք, դուք, նրանք՝ իրենց երկրորդական ձևերով՝ ինքս, ինքդ, ինքը, ինքներս, ինքներդ, ինքները), որոնցից ես, ինքս, մենք, ինքներս ցույց են տալիս առաջին դեմք (գրվում են խոսողի անվան փոխարեն), դու, ինքդ, դուք, ինքներդ՝ երկրորդ դեմք (խոսակցի անվան փոխարեն), նա, ինքը, նրանք, իրենք՝ երրորդ դեմք (ոչ խոսողի, ոչ էլ խոսակցի, այլ ուրիշ անվան փոխարեն): Բայց որովհետև յուրաքանչյուր ոք կարող է մեկ դեպքում խոսող լինել, մի ուրիշ դեպքում խոսակցի, կամ չլինել ոչ մեկը, ոչ էլ մյուսը, ապա անձնական դերանունները ստանում են փոփոխական բնույթ՝ ամեն անգամ նշանակելով տարբեր անձնավորություններ, ավելի շուտ՝ անձն կամ անձնավորություններ ընդհանրապես: Հաճախ նույնիսկ միևնույն կոնտեքստում անձնական թես՝ դերանունը ցույց է տալիս տարբեր անձեր, կամ թես՝ համարվող անձի համար միաժամանակ գործածվում է թո՛ւ կամ թե՛ս: Օրինակ Ստ. Զորյանը ՎՄի կյանքի պատմություն վեպում իր մասին պատմում է օգտագործելով և՛ թես, և՛ թե՛ս՝ դերանունները: Վերջապես գալիս է ահա իմ

հերթը. Այժմ, երբ ժամանակի հեռավորությունից նայում եմ այդ փոքրիկ տղային, տեսնում եմ կարծես, թե նա ինչպես է վեր կենում ու գնում դեպի վիճակահանության սեղանը, նրա փոքրիկ սիրալի ավելի է դողում: Այնուհետև հեղինակն իր համար նորից գործածում է «ես» իսկ «նա»-ս գնում է «հայրը» բառի փոխարեն: «Տասնութ: Այդ նշանակում է, որ ես փուշ չեմ հանել, այն տասնութ թվանշանը... և առաջին դեմքը, որ ես տեսնում եմ—դարձյալ հայրս է: Նա ցնծում է... Նա երբեք այդպես ուրախ չի եղել» (Մի կյանքի պատմ., 1940 թ., էջ 61): Դ. Դեմիրճյանի «Քաջ Նաղար» կոմեդիայում Ուստիանի համար նույն էջում գործածվում են «ես» «դու» և «նա» դերանունները. օրինակ՝

ՔՈՒՍՏԻԱՆ.—(Մի քայլ առաջ է գալիս):

ՆԱԶԱՐ.—(Նայելով նրա կողմը):

ՈՒՍՏԻԱՆ.—(Առաջ գալով). Ձեռ էլ ուղում ճանաչես: Ես եմ Ուստիանը:

ՆԱԶԱՐ.—Փիե... Աղջի, Ուստիան, դու ես: Արի, արի: (Քաջ Նաղար, 1941 թ., էջ 48):

Երրորդ դեմքի նա, նրանք դերանունները կարող են գործածվել բոլոր անձ ցույց տվող կամ իբրև այդպիսին մտածվող գոյական անունների համար: Օրինակ՝ «Ճանապարհին գերմանացիները շատ անգամ բռնեցին նրան (մի կնոջ—Բ. Վ.), ծաղրեցին, ծեծեցին: Գեղեցիկ կինը տգեղ էր թվում նրանց (գերմանացիներին—Բ. Վ.), նա (կինը) Քոդարկված էր, այդ պատճառով էլ հնարավոր եղավ կենդանի, որդու հետ միասին գյուղ հասնել: Բայց այստեղ էլ գերմանացիներ էին: Նրանք (գերմանացիները) վարվում են այնպես...» (Հ. Քոչար, Մի կնոջ պատմածից. Մարազան ուխտ, 1946 թ., էջ 26):

Բոլորովին այլ բնույթի են գոյական անունները: Յուրաքանչյուր գոյական անուն ցույց է տալիս մի որոշ սեռի, որոշ տեսակի առարկա, այդ պատճառով էլ նա երբեք ուրիշ բան նշանակել չի կարող: Օրինակ. «տղա» (Ս. Ջորյան, Մի կյանքի պատմություն և այլուր) նշանակում է միայն «տղա» և ոչ թե «աղջիկ», «հայր», «մայր», «փրկիստիա», «ուսուցիչ» և այլն: Ուստիան (Դ. Դեմիրճյան, Քաջ Նաղար) նշանակում է մի կոնկրետ անձ, միայն մի որոշ մարդ՝ լսողներին կամ ընթերցողներին հայտնի Ուստիանը՝ քաջ Նաղարի կինը, և այն երբեք չի կարող գործածվել «Քնարիկի», «Հակոբի», «Քաջ Նաղարի», «կնոջ», «հերոսուհու» և այլ իմաստներով:

Ինչն է պատճառը, որ անձ ցույց տվող գոյական անունները չեն կարող փոխարինել այլ անձերի անվան, իսկ անձնական դերանունները առանց որևէ դժվարության կարող են գործածվել յուրաքանչյուր անձի անվան, յուրաքանչյուր շնչավոր առարկա ցույց տվող գոյականի փոխարեն: Այդ պետք է բացատրել գոյականի և դերանվան արտահայտած իմաստների մեջ եղած արմատական տարբերությամբ. նրանով, որ գոյականները ցույց են տալիս տարբերակված, որոշակի սեռի, տեսակի առարկա, իսկ դերանունները՝ առարկա ընդհանրապես, առանց տարբերակման: Մակայն անձնական դերանունները բոլորովին էլ անձ ցույց տվող գոյականների փոխանորդ չեն, այդ չէ նրանց լուր էությունը: Անձնական դերանունները ցույց են տալիս անձ ընդհանրապես, ամենավերացական ձևով, այդ պատճառով էլ նրանք հավասարապես դրվում են այլ բառերի փոխարեն, հան-

գիտանալով նրանցից ավելի ճկուն ու դյուրաթեք, երբեմն ավելի հարմար՝ արտահայտելու վերացական գաղափարներ։

Այս առանձնահատկություններ են օժտված ոչ միայն անձնական դերանունները, այլև բոլոր դերանուններն ընդհանրապես։

Բացի անձնական դերանուններից, առարկա են ցույց տալիս նաև մի շարք ցուցական, անորոշ, հարցական, հարաբերական և ժխտական դերանուններ։ Սրանցից յուրաքանչյուրը ցույց է տալիս անհայտ, անորոշ առարկա, հարցում անում այդպիսի առարկայի մասին, հաստատում կամ ժխտում նրա գոյությունը։ Ունենալով այդպիսի ընդհանուր, վերին աստիճանի արտահայտություններ արտահայտելու կարողություն, նրանք կարողանում են փոխարինել այս կամ այն առարկայի անվան, նույնիսկ մի ամբողջական նախադասության, արտահայտել այնպիսի գաղափարներ, որպիսիք որևէ այլ խոսքի մասով հնարավոր չէ հաղորդել։ «Այս» ցուցական դերանվան օրինակ գործածության ենք հանդիպում Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» կոմեդիայում։

ՆԱԶԱՐ.—Լավ կյանքի մեջ ընկա, Ուստիան, լավ, ամսոս առաջ էր եղել։ Ասում ես երազ է էլի՝ էս ամենը Դրուստ որ, ապա, (դեպի դուրս)։ Է՛յ, գյադա, սենեկապետ։ (Սենեկապետը ներս է գալիս)։ Մոտ արի։ (ապա տակ է տալիս նրան)։ Հը՛...։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—(Շփոթվում է)։

ՆԱԶԱՐ.—(Ժթից բռնում թափ է տալիս)։ Հը՛... (սպասում է)։ Ցավեց։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—Ցավեց, տեր իմ։

ՆԱԶԱՐ.—(Բռնում է սենեկապետի ականջը։ Ուստիանին)։ Ահա, հիմի տես (հուպ է տալիս ականջը։ Սենեկապետն աշխատում է դեմքի կծկումները զսպել և կուչ ու ձիգ է գալիս՝ նստելով ու վեր կենալով)։ Էս (=այս) երազ է՞ (Քաջ Նազար, 1941, էջ 51)։

Այստեղ «այս» դերանունը չի փոխարինում ոչ որևէ անվան, ոչ էլ նախադասության, նա գործածված է իր ընդհանուր իմաստով և արտահայտում է Նազարի անսպասելի փառքի տիրանալը, պալատական կյանքի ճոխությունը, թագավորի ազատ, անհոգ կյանքը և այլն և այլն՝ իբրև մեկ ամբողջություն։

Նույնպիսի վերացական առարկաներ, նույնիսկ ամբողջ վերացական գաղափար են արտահայտում նաև այդ, այն, սա, դա, նա, ցուցական դերանունները. օրինակ, Ն. Ջարյանի մոտ՝

«—Իմացել ենք,—կտրեց Լիպարիտը։ —Քեզ հուփ է տվել քաղաքագիտություն հարցերում։

—Ոնց,—չփոթվեց Ղազարյանը։—Այդ իրենք են տարածել ինձ վարկարեկելու համար» («Հացավան», 1949 թ., էջ 204)։

Այդպիսի վերացական, չտարբերակված առարկաներ, երբեմն էլ ամբողջական մտքեր են արտահայտում նաև անորոշ, հարաբերական և այլ դերանունները։ Հատկանշական են բարբառային այնպիսի ձևեր, ինչպես՝ էնիքը (ոմն, այն ինչը), փլանքյասը (ոմն, ոք և այլն) և նմանները, որոնք գործածվում են այն բոլոր դեպքերում, երբ չգիտեն, կամ չեն ուզում հայտնել առարկայի անունը։ Նաիրի Ջարյանը շատ լավ է նկատել անորոշ դերանունների այդ առանձնահատկությունը։ «Հացավան»-ում հան-

դիպում ենք մի դիալոգի, ուր հեղինակը բացատրում է իր գործածած դերանունները և էությունը:

«Ո՛վ է պղտորում,—անտարբեր եղանակով հարցրեց տղան:

—Սա, դու, փլանքյասը,—պատասխանեց նեսո բիձան իր սիրած ոճով, որ գործածում էր բոլոր այն դեպքերում, երբ չէր կարողանում որոշակի անուն տալ» (Շահապետյան, 1948 թ., էջ 333):

Համեմատելով առարկա ցույց տվող դերանունները գոյական անունների հետ, մենք նկատում ենք, որ 1) դերանունները մատնանշում են առարկաներ, հարցում անում առարկաների մասին, կամ արտահայտում առարկայի գաղափար՝ ամենաընդհանուր, վերացական ձևով, առանց որևէ տարբերակման: Յուրաքանչյուր բառ, ինչպես սովորեցնում է Լենինը, ընդհանուր է: Այդ առանձնահատկությամբ օժտված են նաև գոյականներն ու դերանունները, բայց այն տարբերությամբ, որ գոյականը ցույց է տալիս որոշ տեսակի առարկաների ընդհանրություն, իսկ դերանունները՝ առարկաների գաղափար ընդհանուր վերացական ձևով՝ առանց նշելու առարկայի որոշ տեսակ կամ սեռ: Օրինակ՝ «ծառ» գոյականը նշանակում է ծառ ընդհանրապես՝ բարդի, եղևնի, տանձենի, թթենի, բարձր, ցածր, սաղարթախիտ, փշատերև և ընդհանրապես բոլոր ծառերը, այսինքն՝ «ծառ» հանդիսացող բոլոր առարկաները: Ծառերի այդ տեսակներից յուրաքանչյուրի անունը՝ բարդի, եղևնի և այլն, նույնպես վերացություն է, որովհետև չի մատնանշում այս կամ այն կոնկրետ բարդին, եղևնին և այլն: «Ծառ», «բարդի», «եղևնի» և այլ գոյականներից յուրաքանչյուրին կարող են փոխարինել «այս», «այդ», «այն» դերանունները: Օրինակ՝ Այս սաղարթավոր է (բարդիի համար), իսկ այդ՝ (եղևնու համար) փշատերև: Այստեղ «այս» դերանունը մատնացույց է անում կոնկրետ, մեկ, առանձին վերցրած, խոսողից մոտ եղող բարդին (որը տեսնում է նաև խոսակցը), «այդ» դերանունը ցույց է տալիս նույնպես մեկ, կոնկրետ, հայտնի ծառ՝ խոսակցից մոտ եղող եղևնին: Բայց «այս» և «այդ» դերանունները միայն մատնացույց են անում բարդին և եղևնին՝ առանց տալու նրանց անունը: Նրանք չեն էլ կարող որևէ կոնկրետ սեռի (տեսակի) առարկա նշանակել, որովհետև իրենց արտահայտած իմաստով խիստ վերացական են և ամեն մի նախադասության մեջ կարող են հանդես գալ այս կամ այն առարկայի անվանը փոխարինելու դերում: Օրինակ՝ նույն «այս», «այդ» և «այն» դերանուններն առանձին դեպքերում կարող են մատնացույց անել նաև «քար», «ծաղիկ», «տուն», «փողոց» առարկաները, նույնիսկ՝ մի ամբողջ միտք կամ մտածություն. ինչպես՝ Այս է իմ ասածը: Այս է իմ երազը, միտքը, և այլն:

2) Առարկա նշանակող դերանունները միայն մատնացույց են տնում, նշում առարկան, բայց չեն տալիս առարկայի անունը: Նրանք վերացական գաղափարներ արտահայտելով՝ կոնտեքստի մեջ երբեմն կոնկրետություն են ստանում փոխարինելով այս կամ այն հայտնի առարկայի անվան. ինչպես՝ Հակոբը գնաց տուն. նա կվերադառնա ժամը հինգին: Պետիկը, Սուրիկը և Աշոտը գերազանցիկներ են, նրանք բոլորն էլ աշխատում են «Ճ» թվանշաններով փակել ուսումնական տարին և այլն, կամ պահպանում են իրենց ընդհանուր, վերացական ու անորոշ իմաստը, խոսքի մեջ արտահայտելով այնպիսի գաղափարներ, որոնք որևէ այլ խոսքի մասով չի կարելի արտահայտել. Օրինակ՝ Ո՞վ էկավ: Ի՞նչ ես անում: Ոմանք եկան, իսկ

ոմանք՝ աչ, նա ոչիւն չտեսավ և այլն: Այս վերջին տեսակի դերանունները լավագույն ապացույց են այն բանի, որ նրանք իրենց կոթյամբ պատկանում են ինքնուրույն խոսքի մասի՝ դերանվան, որ այդ խոսքի մասը չի կարելի դիտել միայն գոյականի և այլ բառերի փոխարինելու շարահյուսական պաշտոնի տեսակետից:

Այսպիսով՝ դերանունները ցույց են տալիս չտարբերակված առարկաներ կամ իրեր և այդպիսին գիտակցվող ընդհանուր վերացական գաղափարներ, երևույթներ, անցքեր և այլն, մինչդեռ գոյական անունները ցույց են տալիս որոշ սեռի, տեսակի առարկա (քար, ծառ, աղջիկ, գյուղատնտես, ամպրոպ, հեղափոխություն և այլն):

3) Պրոֆ. Մ. Արեղյանը առարկա ցույց տվող անորոշ, հարցական, ժխտական և հարաբերական դերանունները (ոմն, ոք, ոչ ոք, ոչինչ, ինչ, ով, ուր, երբ և այլն) համարում է ոչ թե դերանուն, այլ «անուն գոյական», որովհետև նախադասության մեջ նրանք չեն կատարում այլ անունների փոխարինելու ֆունկցիա: Նա «դերանուն գոյական» է համարում միայն առարկա ցույց տվող անձնական, ցուցական, փոխադարձ դերանունները (ես, դու, նա, սա, դա, նա, միմյանց, իրար, մեկմեկու և այլն) և «որ» հարաբերական կամ շղկապական դերանունը, որոնք նախադասության մեջ կարող են գործածվել անունների փոխարեն:

Համեմատելով Արեղյանի կողմից անուն գոյական և դերանուն գոյական համարվող վերոհիշյալ բառերը, նկատում ենք, որ նրանք իրենց արտահայտած իմաստով և քերականական ձևով նույնն են, որ բառերի այդ երկու խմբերն էլ հավասարապես պետք է դերանուն համարել: Տարբեր է նրանց շարահյուսական պաշտոնը, բայց այդ որևէ վճռական նշանակություն չունի խոսքի մասի, որպես ձևաբանական կատեգորիայի որոշման խնդրում:

2. ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՏԿԱՆԻՇ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Պրոֆ. Մ. Արեղյանը այս, այդ, այն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, ինչ, ինչպիսի, որպիսի և նման դերանունները դասում է ածականների շարքը:

Որոն ուսումնասիրելով այս դերանունների և ածականների քերականական ձևերը, կնկատենք, որ դրանք ոչ մի ընդհանրություն չունեն իրար հետ, դրանք միմյանցից ուղղակի տարբեր քերականական ձևեր են (մի կողմ թողնելով նրանց արտահայտած իմաստի մեջ եղած որոշակի տարբերությունը, մի բան, որ չեն ժխտում նույնիսկ դերանունն առանձին խոսքի մաս չհամարող լեզվաբանները):

Քերականության մեջ ընդունված է ածականները բաժանել երկու տեսակի՝ որակական և հարաբերական: Վերոհիշյալ դերանուններից այս, այդ, այն և նմանները չեն համապատասխանում ածականների այդ երկու տեսակներից և ոչ մեկին: Այսպես՝ նրանք ցույց չեն տալիս հարաբերությունը մի այլ առարկայի հետ, այսինքն տվյալ առարկայի ինչ նյութից շինված լինելը, ինչպես հարաբերական ածականները՝ փայտե դուռ, ոսկյա ժամացույց, երկաթե ցանց և այլն, որոնք ցույց են տալիս դուռ, ժամացույց և ցանց առարկաների հարաբերությունը փայտ, ոսկի, երկաթ առարկաների:

հետ, նրանցից շինված լինելը: Վերոհիշյալ դերանունները ցույց չեն տալիս մի այլ առարկայի վերաբերություն կամ պատկանելություն, ինչպես հատկացական դերանունները՝ մայրենի լեզու, հայրենի կամ հայրենական գիտություն աշակերտական տեսք, ուսուցչական կոնֆերանս և այլն: Այդ ցուցական դերանունները իրենց քերականական ձևով արմատապես տարբերվում են մանավանդ որական ածականներից, որովհետև չունեն համեմատության աստիճաններ. եթե որական ածականներից յուրաքանչյուրը կարող է դործածվել դրական, համեմատական և գերադրական աստիճանով. ինչպես լավ, ավելի լավ, ամենալավ, գեղեցիկ, ավելի գեղեցիկ, ամենագեղեցիկ կամ գեղեցկագույն, բարի, ավելի բարի, ամենաբարի և այլն, ապա ցուցական դերանունները համեմատության աստիճաններ չեն կազմում և այդ տեսակետից մնում են անփոփոխ. օրինակ՝ չի կարելի ասել՝ այսպիսի, ավելի այսպիսի, ամենաայսպիսի կամ այսպիսիագույն, այդպիսի, ավելի այդպիսի, ամենաայդպիսի և այլն:

Պրոֆ. Մ. Արեղյանն ածականների շարքն է դասում այնպիսի դերանուններ, որոնք ընդհանրապես ոչ մի ընդհանրություն չունեն ածականների հետ, ոչ իմաստի և ոչ էլ քերականական ձևի նկատմամբ (այս, այդ, այս, սույն, դույն, նույն, միևնույն, մյուս, մեկել, որ և այլն): Այս բաները դասվում են ածականների շարքը լոկ այն պատճառով, որ նախագասություն մեջ ածվում, գրվում են անունների վրա, այսինքն նախագասությունների մեջ կատարում են ածականների նման ֆունկցիա՝ հանգես զալով իրիս որոշիչ. օրինակ՝ ազնիվ մարդ, այս մարդը. կարմիր դրոշ, նույն դրոշը, փայտյա գրիչ. սույն գրությունը և այլն: Այս կապակցությունների մեջ ազնիվ, կարմիր, փայտյա բաներն իրոք ածականներ են, որովհետև նրանք ցույց են տալիս առարկայի որակ կամ հատկացում, վերաբերություն, մինչդեռ այս, նույն, սույն բաները ածականի ոչ մի իմաստ չեն արտահայտում. թեև հանգես են գալիս ածականների նման՝ իրր որոշիչ:

Արեղյանի քերականության մեջ ածական համարվող մի շարք դերանուններ իրենց արտահայտած իմաստով մասամբ մոտ են որական ածականներին. օրինակ՝ այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այս տեսակ, այդ տեսակ, այն տեսակ և այլն: Սակայն նշված դերանունների և որական ածականների հարաբերական ածականների միջև եղած նմանությունը շատ աննշան է. էսպես նրանց արտահայտած իմաստի մեջ կա արմատական տարբերություն. այսպես օրինակ՝ քարե պատ, բարձր պատ կապակցությունների մեջ թարե հարաբերական ածականը ցույց է տալիս, որ պատը քարից է շինված և ոչ թե աղյուսից, կավից և այլն, իսկ «բարձր» որական ածականը ցույց է տալիս պատ առարկայի որակը, այն, որ պատը բարձր է և ոչ թե ցածր, թեքված, նեղ, ամուր կամ խախուտ և այլն: Վերոհիշյալ կապակցությունների մեջ եղած երկու տարբեր տեսակի ածականները (քարե և բարձր) կարող ենք փոխարինել մեկ ցուցական դերանունով՝ այսպիսի պատ, որտեղ «այսպիսի» դերանունը հավասարապես արտահայտում է թե որական և թե հարաբերական ածականի իմաստ: «Այսպիսի» դերանունը կարող է փոխարինել ոչ միայն «բարձր» և «քարե» ածականներին, այլև նման բոլոր ածականներին ընդհանրապես՝ ցածր, խախուտ, տհաճ, գեղեցիկ, աղյուսե, ոսկյա, երկաթե և այլն և այլն. նշանակում է՝ «այսպիսի» բանը (և նման դերանունները)

նա ժողովրդականությունը և ոչ էլ իրենց արտահայտած իմաստով չի կարելի դասել ածականների շարքը, իսկ եթե մի բոլոր մոռանանք նրա յուրահատկությունը և համարենք ածական, ապա ինչպիսի ածական պետք է համարենք՝ այն՝ որական, հարաբերական, թե՛ հատկացական (այսպիսին է կարող է փոխարինել նաև հատկացական ածականների. օրինակ՝ «մայրական սեր», «այսպիսի սեր» և այլն), որովհետև այդ դերանունը հանդես է գալիս ածականի երեք տեսակների պաշտոնով էլ։ Դուրս է այն համարենք թե որական, թե հարաբերական և հատկացական (ինչպես շատ հաճախ վարվում է Մ. Արեգյանը)։ Բայց այդ դեպքում մենք տարվելով բառի շարահյուսական պաշտոնով, նրա կոնկրետ կիրառությունը, կշիռը չենք իրար հետ քերականական տարբեր իրողություններ։

3. ԹՎԻ, ՉԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ԳԱՂԱՓԱՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Արեգյանը թվական անունն առանձին խոսքի մաս չի համարում և այն ձուլում է ածականի հետ (տես՝ Քանական մականունները և Քանական մականունները, «Աշխարհարարի քերականություն», էջ 57)։ Նա ածական է համարում նաև այն բոլոր դերանունները, որոնք անորոշ ձևով ցույց են տալիս թվի ու քանակի գաղափար. ինչպես՝ այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ և այլն, որոնք կոչվում է ցուցական-քանական մականունները։ Արեգյանն այս բառերը ածական է համարում հաշվի առնելով միայն նրանց շարահյուսական պաշտոնը, նախադասության մեջ որոշչի դերում հանդես գալը։ Մինչդեռ այսքան, այդքան, այնքան և նման ցուցական-քանական դերանունները (Արեգյանն ճիշտ տեղի է գտել նրանց համար) էապես տարբերվում են ածականներից՝ իրենց արտահայտած իմաստի և քերականական ձևի տեսակետից։

Թվի, քանակի ու չափի գաղափար արտահայտող դերանուններից և ոչ մեկը (այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, որչափ, ինչքան, որքան և այլն) իր քերականական ձևով ոչ որական և ոչ էլ հարաբերական ածական կարելի է համարել, որովհետև ա) այդ բառերը չեն կազմում համեմատության աստիճաններ։ Չի կարելի ասել «այսքան», «այդչափ այսքան», «ամենայնքան» և այլն, բ) նրանք ցույց են տալիս թիվ, չափ ու քանակ՝ ընդհանրապես, մինչդեռ ածական անունները ցույց են տալիս առարկայի հատկություն, որպիսություն, վերաբերում ու հատկացում։ Թվի, չափ ու քանակի գաղափար արտահայտող դերանունները, բացառությամբ քանիեորդ բառի, ոչ մի ընդհանրություն չունեն նաև դասական և բաշխական թվականների հետ, իսկ քանական թվականների հետ որոշ ընդհանուր նմանություն ունենալով հանդերձ, այնուամենայնիվ, տարբեր են նրանցից։ Քանական թվականները ցույց են տալիս առարկաների կոնկրետ, հայտնի թիվ, մինչդեռ քանակ ցույց տվող դերանունները (այսքան, այդքան, այնքան), — քանակ ընդհանրապես։ Օրինակ. «Հինդ տետր» կապակցության մեջ «հինդ» թվականը ցույց է տալիս, որ տետրերի քանակը հինգ է և ոչ թե վեց, չորս և այլն։ Երկու մարդ» կապակցության մեջ երկու թվականը ցույց է տա-

լիս, որ մարդկանց քանակը երկու է և ոչ թե հինգ, երեք, հազար և այլն: Բոլորովին այլ բնույթի են քանակ արտահայտող դերանունները. «այսքան» դերանունը կարող է փոխարինել թե՛ հինգ, թե՛ երկու և թե՛ բոլոր թվականներին («այսքան տետր», «այսքան մարդ»), որովհետև «այսքան» բառը ցույց է տալիս ոչ թե կոնկրետ թիվ, այլ քանակություն ընդհանրապես:

4. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱԿԲԱՅՆԵՐ

Պրոֆ. Մ. Արեղյանը մակրայների շարքն է դասում աստ, անդ, ուրեք, ուսաք, ուր, երբ և նման դերանունները: Պալասանյանը բացի այդ դերանուններից մակրայների շարքն է դասում նաև նախադասության մեջ իբրև պարագա հանդես եկող որոշ ցուցական և հարցական դերանուններ՝ այստեղ, այնպես (որակական մակրայ), որչափ, այսչափ (քանակական մակրայ):

Ուսումնասիրելով մակրայի և գործողության զանազան պարագաներ, հատկանիշներ ցույց տվող դերանունների առանձնահատկությունները, նկատում ենք, որ նրանք բոլորովին առանձին, ինքնուրույն քերականական կատեգորիաներ են:

Մակրայները ցույց են տալիս գործողության կատարման որոշ ձևը, տեղը, ժամանակը, քանակն ու չափը: Օրինակ՝ «Մի քանի րոպե չանցած՝ անտառը ողողվեց ամբողջապես. նրա զառիվայրերից սկսեցին հոսել գետեր ու առուներ, ձանապարհի հետքը կորավ բոլորովին» (Մուրացան): Ընդգծված մակրայները թեև կազմված են «ամբողջ», «բոլոր», «դերանուններից», բայց ցույց են տալիս գործողության կատարման որոշակի հանգամանքներ: Անհրաժեշտ է նկատել, որ մակրայների մեծ մասը կազմվում է այլ խոսքի մասերից՝ մակրայակերտ ածանցների միջոցով, մինչդեռ դերանունները պարզ, արմատական կամ այժմ իբրև այդպիսին գիտակցվող բառեր են. (ինչպես՝ ես, դու, նա, սա, դա, նա, այս, այդ, այն, բոլոր, ողջ, ոք, ով, ինչ և այլն), կամ կազմված են անպայման մի դերանունով և մի այլ խոսքի մասով. Օրինակ՝ այս-պես, այդ-պես, այն-պես, այս-չափ, այդ-չափ, այս-տեղ, ամեն ինչ, ամեն ոք և այլն:

Այսպես կոչված «մակրայական դերանունները» իրենց արտահայտած իմաստով խիստ տարբերվում են մակրայներից: Դերանուններն այստեղ էլ հանդես են գալիս իրենց վերին աստիճանի վերացական բնույթով, նրանք միայն մատնացույց են անում գործողության կատարման տեղը, ժամանակը, ձևը, չափն ու քանակը, բայց անորոշ ձևով: Մակրայներն այլ բնույթի են. նրանք ցույց են տալիս գործողության կատարման որոշ, տարբերակված պարագաներ: Օրինակ՝ ներքուստ, արտաքուստ, պատնիվեր, դեմ-հանդիման և այլ մակրայները ցույց են տալիս գործողության հարաբերությունները ներսի, արտաքինի, դեմ-դիմաց լինելու և այլ գաղափարների հետ: Օրինակ՝ «Նա ներքուստ տխուր էր, բայց արտաքուստ իրեն ուրախ էր ցույց տալիս» նախադասության մեջ «ներքուստ» և «արտաքուստ» մակրայները ցույց են տալիս գործողության որոշակի պարագա, այնպես որ չի կարելի փոխել դրանց տեղերը, կամ փոխարինել դրանք տեղ ցույց տվող այլ մակրայներով, եթե չենք ուզում փոխել կամ աղավաղել նախա-

դասության միտքը, ինչպես ճշմարտաբանությունը էր, բայց ներքուստ ուրախ էր ցույց տալիս իրենք:

Դերանունը օժտված լինելով վերացական գաղափարներ արտահայտելու ունակությամբ, կարող է փոխարինել այդ տեսակի մի շարք մակրայնների: Այսպես կոչված «մակրայական դերանունները» որոշ դեպքերում նույնիսկ արտահայտում են մի ամբողջական միտք և մտածություն:

Տեղի մակրայը ցույց է տալիս գործողության կատարման հայտնի կամ համեմատարար ավելի որոշ տեղը, մինչդեռ տեղի գաղափար արտահայտող դերանունը, եթե այն չի փոխարինել կոնտեքստի մեջ հայտնի որևէ մակրայի, միայն մատնացույց է անում տեղը, բայց չի տալիս այդ տեղի անունը (ներքուստ, արտաքուստ, դեմ առ դեմ և այլն) կամ ընդհանրապես արտահայտում է տեղի վերացական, անորոշ գաղափար: Օրինակ՝ «Մայրս չգիտեմ ուր է գնացել, իսկ տատս ու հորեղորս կինը՝ Սանամ զիզին բախում, ծառի տակ կար են անում» (Ս. Ջորյան, «Մի կյանքի պատմություն», 1946, էջ 6): Այս նախադասությունից պարզ երևում է, որ խոսողը իր համար հայտնի տեղի պարագայի համար օգտագործել է գոյական անուններ (բախում, ծառի տակ, թեև նույն ձևով կարող էր օգտագործել նաև մակրայը «...ներսը կար էին անում»), իսկ անհայտ տեղի պարագայի համար (հիշել «չգիտեմ» բայը) օգտագործել է «ուր» դերանունը:

Նույն տարրերությունն է նկատվում նաև ձևի, ժամանակի, չափ ու քանակի մակրայների և համապատասխան (նույն գաղափարն արտահայտող) դերանունների միջև: Օրինակ՝ «...Դամին քիչ-քիչ դադարեց, փայլակն սկսեց շողալ մերթնդմերթն նախադասության մեջ եղած մակրայները ցույց են տալիս գործողության կատարման որոշ ձև, որը չի կարելի արտահայտել ասենք թե «միանգամից», «իսկույն», «մեծապես» և այլ մակրայներով, եթե չենք ուզում փոխել կամ աղավաղել նախադասության միտքը: Մինչդեռ ձև ցույց տվող դերանուններն արտահայտելով չտարբերակված, տարտամ ու անորոշ ձևի գաղափար, կարող են փոխարինել մի շարք ձևի մակրայների: Օրինակ՝ 1) ճա ուժգին հարվածում էր սալին. այդպես կարող էր հարվածել միայն մեծ կորովի տեր մարդը», 2) «Աղջիկը խոսում էր հանգարտ, մեղմորեն, այդպես են խոսում միայն այդ տարիքում, երբ լուսին է, խաղաղ երեկո, երբ նրա հետ է սիրած երիտասարդը»: Ինչպես տեսնում ենք, «այդպես» դերանունը առաջին նախադասության մեջ՝ փոխարինել է «ուժգին» ձևի մակրային, իսկ երկրորդ նախադասության մեջ՝ «հանգարտ» և «մեղմորեն» ձևի մակրայներին: Գործողության ձև ցույց տվող դերանունները նույնպես հաճախ արտահայտում են մի ամբողջ միտք կամ մտածություն. Օրինակ՝ չ. Գոշարի պատմվածքներից մեկի հերոսուհին պատմում է. «Երեխաներն անտառից գտնում, բերում էին մեր թուղթիկները, կարգում ու հույսով սպասում էինք: Այսպես էր անցնում մեր կյանքը» (չ. Գոշար, մի կնոջ պատմածից, «Սրբազան ուխտ», էջ 39): Նույնը նաև Ն. Ջորյանի մոտ--«Այդպես... բացառանչեց Լևոնը գիմումի ընթերցումը վերջացնելուց հետո և հարցական նայեց Լևոնին» (Ն. Ջորյան, «Հացավան», էջ 222):

Ինչպես նկատվում է, տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի գաղափար արտահայտող դերանունները չի կարելի շփոթել համապատասխան

գաղափարներ արտահայտող մակբայների հետ: Նրանք և՛ քերականորեն, և՛ իրենց լեզուական-սեմանտիկական արժեքով տարբեր կատեգորիաներ են:

* * *

Ինչպես ասվեց, քերականության պատմության մեջ այն բոլոր լեզվաբանները, որոնք դերանունն առանձին խոսքի մաս են համարում, հիմք են ընդունում նրա շարահյուսական պաշտոնը՝ գոյականին, ածականին, թվականին ու մակբային փոխարինելու հանգամանքը: Սակայն այդ չէ դերանվան, որպես ինքնուրույն խոսքի մասի բուն էությունը. ավելին, նախագասության մեջ բառի կատարած պաշտոնը ընդհանրապես չի կարող հիմք հանդիսանալ որևէ խոսքի մասի որոշման համար: Ակսակովը, Դավիդովը, Շտեյնտայը, Պոտերնյան և մի շարք այլ քերականներ առանց որևէ դժվարության մերժում են դերանունը առանձին խոսքի մաս համարելու տրագիյիոն դրույթը. գտնելով, որ այն հիմնված է բառի շարահյուսական պաշտոնի վրա, որ դերանունն այսպիսով էապես ոչ թե ձևաբանական, այլ շարահյուսական կատեգորիա է դառնում: Իրոք՝ դերանունն առանձին խոսքի մաս համարելու ջատագովներն անգամ չեն ըմբռնում դերանվան բուն էությունը, նույնիսկ լիովին չեն տեսնում նրա շարահյուսական բոլոր կիրառությունները:

Ոչ մի կասկած չի կարող, որ դերանուններն, իրոք, փոխարինում են գոյականին, ածականին, թվականին ու մակբային: Օրինակ՝ գոյականի փոխարեն. Երիտասարդը աշխատում էր կանգնեցնել ձիուն, բայց նա (այսինքն՝ ձին) գլուխը դետնին զարկելով, խոխում էր» (Բաֆֆի, «Դավիթ բեկ»): «Ուումըը դիմեց դեպի քայքայված բերդը, ուր (այսինքն՝ բերդը), վաղեմի ժամանակներից շինված էր մի բարձրավանդակի վրա» (Նույնը):

Ածականի փոխարեն՝ Նա ուներ կարմիր գույնի մի զգեստ. այդ գույնի էին նաև կոշիկները: Նա հիանալի ձայն ուներ. այդպիսի ձայն եո ոչ մի տեղ չեմ լսել: Նաև հետևյալ կապակցությունների մեջ՝ «այսպիսի գիրք», «այդպիսի տուն», «այնպիսի երգ» և այլն:

Թվականի փոխարեն՝ Կիման գնեց երեք գիրք, այդքան գիրք գնեց նաև Աշոտը: Նաև՝ «այսքան տետր», «որքան մարդիկ», «ինչքան սեր», «այնքան ջանք» և նման կապակցությունների մեջ:

Մակբայի փոխարեն՝ Շնա դանդաղ էր քայլում, այդպես էր քայլում և նրա փոքրիկ ուղեկիցը: Նաև՝ «այսպես ասել», «այդպես երգել», «այդքան ուրել» և նման կապակցությունների մեջ:

Սակայն դերանունները կարող են փոխարինել ոչ միայն գոյականի, ածականի, թվականի ու մակբայի, այլև այլ խոսքի մասերի, նույնիսկ՝ մի ամբողջ նախագասության կամ առանձին կապակցությունների. օրինակ՝ «Նա պահանջում է կյանքը պահ տված և այդ ուրանալ չի կարող ոչ ոք» (Ս. Շահադիզ, «Էլեոնի վիշտը»)՝ նախագասության մեջ «այդ» դերանունը փոխարինել է նախորդ ամբողջ նախագասության կամ դերբայական դարձվածին: Բերենք համանման մի քանի օրինակներ ևս՝ «Թող թափվեն անպարտ արյան առուներ, դա անմահ գործի է ավետավոր» (Ս. Շահադիզ, «Էլեոնի վիշտը»), «ՄՏ կայանի կարողությունը կրկնապատկվել է, որի շնորհիվ վարի, ցանքի... առաջադրանքները գերակատարվել են» («Սովետական

Հայաստան», օրաթերթ, 12 մարտի, 1952 թ.): «Շատ ձեռնարկություններ հազեցվել են տեխնիկական նոր սարքավորումներով, որը հնարավորություն է տվել ընդլայնելու տնային գործածությունների իրերի ասորտիմենտը» (սովետական Հայաստան, օրաթերթ, 26 մարտի, 1952 թ.):

Ինչպես տեսնում ենք, դերանունը կատարում է շարահյուսական բազմազան ֆունկցիաներ, որոնք հիմք չեն կարող հանդիսանալ այն իրեր առանձին խոսքի մաս դիտելու համար: Եթե դերանունները դասակարգելու լինենք ըստ նրանց այս կամ այն խոսքի մասին փոխարինելու պաշտոնի (ինչպես վարվում են Այսընյանը, Պալասոսյանը և շատ ու շատերը), ապա ինչպես պիտի վարվել հենց նոր հիշված դերանունների հետ, որոնք փոխարինում են մի տմրոզ նախադասության:

Դերանուններն ըստ իրենց շարահյուսական պաշտոնի դասակարգելը մեծ անհարմարություններ է ստեղծում և տեղի տալիս շփոթությունների, որովհետև նույն դերանունը տարբեր նախադասությունների մեջ կարող է հանդես գալ տարբեր պաշտոնով: Օրինակ՝ 1) գոյականաբար՝ իրեր ենթակա, խնդիր և ստորոգելիական վերադիր. «Ինչ էր մինչև այն օր կապել նրան մի օտար երկրի հետ, ինչն էր մոռանալ տվել նրան հայրենիքի թըշվառությունը» (Բաֆֆի, «Դավիթ բեկ»); «Ինչ կարող է շինել թևքերը կտրված արծիվը» (նույնը): «Այդ տափարակի վերա բացի բարակ սեզից ոչինչ չես գտնի» (Պ. Պոռյան, «Հացի խնդիր»); «Հալարյանը ոչինչ չասաց» (Շիրվանզադե, «Զուր հույսեր»): Այդ էլ իմ ասածը: «Ես ցույց տվեցի այդ և ասացի...»:

2. Իրեր որոշիչ՝ «Բայց խնդիրը նրանումն էր, թե ինչ աղջիկ պիտի ուզեր» (Մուրացան, «Ինչ լայեղ է»); «Ինչ սնտառ է, ինչ արձակ հովիտ» (Ս. Շահադիզ, «Պոետ նյութապաշտ և քաղաքացի»); «Բայց այնուամենայնիվ ոչինչ օգուտ դեռ չի դուրս եկել» (Պ. Պոռյան, «Հացի խնդիր»); «Այդ գիրքը լավ է»։ «Այդ ձայնը, այդ խոշոր գլուխը, այդ խելացի աչքերի սուր արտահայտությունն ազդեցին տանտիրուհու վրա» (Շիրվանզադե «Արսեն Դիմաքսյան»):

3. Իրեր պարագա՝ «Ինչ (=ինչու) ես չար հրեշտակի պես հոգիս առնում» (Բաֆֆի, «Դավիթ բեկ»); «Ինչ եք վեր թափվել անգործ ու անբան» (Հ. Թումանյան, «Պողոս-Պետրոս») և այլն: «Յուր նյութական կարողության վերաբերությամբ ոչինչ չէր խոսում» (Մուրացան, «Ինչ լայեղ է»)։ Այս նախադասությունը կարող է մեկնաբանվել երկու կերպ՝ «Յուր նյութական կարողության վերաբերությամբ բոլորովին չէր խոսում» և «...ոչինչ կամ ոչ մի բան չէր ասում»:

Վերը բերված օրինակները ցույց են տալիս, որ նույն դերանունը տարբեր կոնտեքստներում կարող է հանդես գալ շարահյուսական զանազան պաշտոններով, ուստի այդ չի կարող հիմք հանդիսանալ դերանունների դասակարգման համար, այլապես անխուսափելի կլինի նույն դերանունը տարբեր խոսքի մասերի վերագրելը: Հենց այդպես է ստացվում Մ. Արեղյանի մոտ, որը այս, ինչ և մի շարք այլ դերանուններ մի դեպքում համարում է գոյական, մի այլ դեպքում՝ ածական և այլն:

Ո՞րն է սակայն դերանվան առանձնահատկությունը, ինչո՞վ է նա զանազանվում այլ խոսքի մասերից, կա արդյոք որևէ տարբերություն նրա և այլ խոսքի մասերի միջև, թե նա իրոք քերականորեն պետք է դասվի:

գոյականի, ածականի, թվականի և մակբայի շարքը, ինչպես գտնում են եվրոպական և ուսական մի շարք լեզվաբաններ, ինչպես և հայ քերականներից Մ. Արեղյանը, Հ. Պետրոսյանը¹ և ուրիշները:

Որ դերանունն իր արտահայտած իմաստով, իր էությունամբ չի նույնանում գոյականի, ածականի, թվականի ու մակբայի հետ, հիանալի բացատրում է դերանունը առանձին խոսքի մաս չհամարելու ամենաջերմ պաշտպան Դ. Պավսկին: «Դերանուններին տրված անունը լիովին չի արտահայտում լեզվի մեջ նրանց ունեցած նշանակությունը,—գրում է Պավսկին.—Դերանունները չեն փոխարինում անվանը, այլ հանդիսանում են լոկ որպես ցուցում, ակնարկություն նրանց մասին՝ առանց արտահայտելու առարկաների որակը, սեռը, թիվը... Դերանունը ոչ միայն չի փոխարինում անվանը, այլև ուզողի հակադիր է նրան: Անունը, ինչպիսին էլ նա լինի՝ գոյական, ածական կամ թվական, ուղղակի ցույց է տալիս առարկան կամ նրա որակը կամ որոշակիորեն նշում է կոնկրետ, հայտնի թիվ (տեքստում՝ именует известное число) և, հետևաբար, կրում է իր մեջ ակնբախ, շոշափելի ներքին բովանդակություն, իսկ դերանունը մտահայեցողության համար և առարկաների տարբեր կատեգորիաների բաժանման համար ծառայում է իբրև ձև: Այսպես, օրինակ. ով, ինչ և նման ձևերի տակ զատվում են բոլոր գոյական անունները, ինչպիսի, ում և նման ձևերի տակ՝ բոլոր ածականները, ինչքան... կամ որքան և նման ձևերի տակ՝ բոլոր թվականները: Ինչպես գրքի համարը կամ վերնագիրը չի կարող փոխարինել գրքին, ճիշտ այդպես էլ դերանունը չի կարող փոխարինել անվանը»²:

Եվ իրոք, դերանունը անվան կամ որևէ այլ խոսքի մասի փոխարինող չէ, այդ չէ նրա քերականական և իմացաբանական բնույթը: Դ. Պավսկին միանգամայն ճիշտ է նկատում դերանվան վերին աստիճանի վերացական արստրակտ բնույթը, սակայն նա և նրա համախոհները չարաչար սխալվում են, երբ դերանվան այդ առանձնահատկությունը նկատելով հանդերձ, այն առանձին խոսքի մաս չեն համարում՝ գտնելով, թե դերանունը մտահայեցողության համար և առարկաների՝ տարբեր կատեգորիաների բաժանման համար իբրև ձև է ծառայում:

«Ռուսաց լեզու» մեծարժեք աշխատության մեջ ակադ. Վ. Վ. Վինոգրադովը նույնպես դերանունը առանձին խոսքի մաս չի համարում: Նա գրում է. «... Եթե բոլոր դերանունները հավաքենք մի խմբի մեջ, ապա կխախտվի խոսքի մասի սխեմայի ամբողջականությունը, դերանունների խմբում հանդես կգան քերականական տարրեր բնույթի բառեր: Դերանունների միավորումը հնարավոր է լոկ լեքսիկական-սեմանտիկական հատկանիշների հիման վրա: Բայց այդ դեպքում հարկ կլինի դերանուններին վերագրել նաև մի քանիսն այն բառերից, որոնք հանդիսանում են գոյականներ,

¹ Հետևելով պրոֆ. Մ. Արեղյանին, Հ. Պետրոսյանը գրում է. «Դերանուն կոչվում են այս գոյական բառերը (ընդգծվում են մերն է—Բ. Վ.), որոնք զբաղվում են ծանոթ առարկաների անունների տեղ այդ անունները նորից չկրկնելու համար. օրինակ՝ Սուրիկը զբաղված էր (Սուրիկը) նստեց նախաճաշի. այստեղ նա բառը զբաղված է Սուրիկի անվան փոխարեն, նրա տեղ, որպեսզի Սուրիկ բառը մոտեմոտ չկրկնենք» («Հայոց լեզվի գործնական քերականություն», Երևան, 1927, մասն Ա, էջ 33):

² Г. Павский, Филологические наблюдения над составом русского языка, СПб, 1850, стр. 249.

ածականներ, մակրայններ, շաղկապներ և անգամ՝ բայեր: Եթե վերասենք գերանունների խումբը, և գերանունները տեսակավորենք, դասենք այլ կատեգորիաների շարքը, ապա անհրաժեշտ կլինի ոչ միայն ածականների, այլև գոյականների մեջ առանձնացնել գերանունները որպես յուրահատուկ ենթատեսակներ: Բայց նպատակահարմար է այդ. Այս հարցին պատասխանելուն կօգնի գերանունների իմաստային կազմի (смысловая структура) վերլուծությունը¹:

Ակադ. Վ. Վ. Վինոգրադովը, սակայն, հարկ եղած չափով կանգ չի առնում գերանունների բառա-իմաստային կողմի հարցերի վրա, լրովրն չի բացահայտում նրանց իմացարանական յուրահատուկ բնույթը: Վերջի-վերջո նա հանգում է այն եզրակացության, որ գերանունները քերականական առանձին խումբ չեն կազմում, որ նրանք գոյականի, ածականի, թվականի և մակրայի տարրեր կիրառություններ են, կապված խոսքի կոնկրետ արտահայտության կամ կոնկրետ կոնտեքստի հետ: Բայց ակադ. Վինոգրադովը մասնակի վերապահություն է անում, գտնելով, որ, այնուամենայնիվ, կան որոշ գերանուններ (հիմնականում՝ անձնական, անորոշ և ժխտական գերանուններ), որոնք չեն նույնանում ոչ մի խոսքի մասի հետ և, հետևապես, կազմում են առանձին խումբ: Ըստ Վինոգրադովի՝ գերանունները քերականորեն այլևս չեն բաժանվում այլ խոսքի մասերից և տարալուծվել են քերականական տարրեր կատեգորիաների մեջ: Այսպիսով, ժամանակակից լեզվում գերանվան հասկացողությունը լեքսիկական-սեմանտիկական հասկացողություն է: Հնագույն գերանունների մեծ մասը ներառել է (вросла) քերականական այլ դասերի սխտեմի մեջ: Միայն բառերի մի ոչ մեծ խումբ՝ я, ты, он (-а -о, они) мы, вы, себя, кто, что, что-то, кто-нибудь, что-нибудь, некто, нечто, никто, ничто, кое-кто, кое-что պահպանում է իր քերականական յուրօրինակությունը, քերականորեն մեկուսացված լինելու որոշակի հատկանիշները, չձուլվելով գոյական անվան կատեգորիայի հետ²:

Այսպիսով, ակադ. Վինոգրադովը ընդհանրապես դեմ լինելով գերանուններն առանձին խոսքի մաս համարելուն, որոշ վերապահում է անում անձնական, անորոշ և ժխտական գերանունների նկատմամբ, որոնք տարտամ ձևով ցույց են տալիս առարկաներ և քերականորեն տարրերվում են գոյականներից³: Վ. Վ. Վինոգրադովը բոլոր գերանունները, որոնք իրր չունեն քերականական ինքնուրույն ձև և ըստ ձևի նման են այլ խոսքի մասերի, առաջարկում է համապատասխանաբար դասել ածականի, թվականի և մակրայի շարքը: Այդպես էլ վարվում է պրոֆ. Մ. Արեդյանը:

Բոլոր այն լեզվաբանները, որոնք գերանունն առանձին խոսքի մաս չեն համարում, զարմանալիորեն խուսափում են նրա որոշման գեպիցում հաշվի առնելու բառերի արտահայտած իմաստը:

Ակադ. Վ. Վ. Վինոգրադովը բառերի իմաստային կողմը հաշվի առնելը բոլորովին աննպատակահարմար է համարում, մանավանդ, գերա-

¹ В. В. Виноградов, Русский язык, Москва, 1947, стр. 321.

² Նույն տեղում, էջ 326:

³ «Ռուսաց լեզու» աշխատության մեջ ակադ. Վ. Վ. Վինոգրադովը ընդունում է 7 խոսքի մաս, որոնց թվում նաև «предметно-личные» առարկայական-անձնական գերանունները, էջ 42—43:

նունների խմբավորման ժամանակ, որովհետև այդ դեպքում իրր հարկադրված կլինենք դերանունների շարքը դասելու նաև որոշ գոյական, ածական, թվական անուններ և մակբայներ, որոնք տարբեր կոնտեքստներում, բանավոր խոսքի տարբեր մոմենտներում արտահայտելով տարբեր իմաստ, կորցնում են իրենց բուն նշանակությունը և դերանվան նման արտահայտում են արտարկատ, որևէ կոնկրետությունից զուրկ գաղափարներ:

Ակադ. Ա. Ա. Շախմատովը «Ռուսաց լեզվի շարահյուսություն» աշխատության մեջ նշում է մի քանի այդպիսի բառեր՝ человек, люди, друг, крещение, дело և այլն, նման կապակցությունների մեջ՝ друг друга, он человек хороший, каждый человек из них կամ թվականների հարադրությամբ՝ «Однажды человек десять офицеров обедали у Сильвио» (А. С. Пушкин, Выстрел), «В темноте человек двадцать людей окружили Пьера» (Л. Н. Толстой, Война и мир).

Հետևելով Ա. Ա. Շախմատովին, ակադ. Վ. Վ. Վինոգրադովը «Ռուսաց լեզու» աշխատության մեջ բերում է այդպիսի բառերի մի քանի օրինակներ. ինչպես՝ вещь, «А ведь обед-вещь приятная» (Чернышевский, Что делать?), «Бал—вещь хорошая, неволя-то горька» (Грибоедов, Горе от ума) կամ «дело» բառի այսպիսի կիրառությունները՝ «На дело организации и развития электротехнического факультета положено много тяжелой работы» (Թերթերից), «Поставить дело государственного хозяйства и науки (նույնը), «Дело идет о жизни человека» (Гоголь, Ревизор), «Дело было в начале сентября» (Тургенев, Льгов), «А дело уже идет к рассвету» (Грибоедов, Горе от ума)¹.

Այսպիսի օրինակներ կարելի է բերել նաև հայերենից ու բազմաթիվ այլ լեզուներից. օրինակ. հայերենում՝ «բան» բառից՝ մի սիրուն բան պատմեց. մասն-բանի, աշխարհիս բաները, նոր բաներ բացվեցին, դու բանից անտեղյակ ես, բանի տակ բան կա. մի բան եմ առել, մի բանի նման է և այլն (տես Ս. Մալխասյան «Հայերեն բացատրական բառարան», հ. I, էջ 409—410): «Գործ» բառից՝ գնաց, որ մի գործ ճարի. Ո. Արովյանի գործերը տպագրված են, բենգինի գործը ածուխը չի կարող կատարել, նրա դեմ գործ բացեց, ամբողջ գործը նայեցի, ձեր ասած թուղթը չգտա: Գործք առաքելուց. թող իրար գլուխ ջարդեն, ում գործն է և այլն (Ս. Մալխասյան, նույնը, էջ 462): «Մարդ» բառից հինգ հոգի էին՝ երեքը մարդ, երկուսը՝ կին, Մարդս տանը չէ, մարդ է գալիս, գնա (մի ոմն, մեկի իմաստով), Մարդու բան չասես (ոքմին, որևէ մեկի իմաստով), Մարդ եթե գիտենար, թե վաղն ինչ պիտի լինի, Պետական մարդ և այլն (Ս. Մալխասյան, «Հայերեն բացատրական բառարան», հ. II, էջ 273):

Այս կարգի բառերի մասին ակադ. Վինոգրադովը գրում է. «Լեքսիկական նշանակության այսօրինակ կորուստը հատուկ է իհարկե, ոչ բոլոր գոյականներին, այլ միայն նրանց համեմատաբար նվազ խմբերի, որոնց մեջ են մտնում человек, народ, вещь, дело բարբառային ձևերում (просторечн.) малый, женщина գոեհկարանով. баба, մտերմական (фамилярн.) парень, душа, животное և մի շարք ուրիշները»².

¹ В. В. Виноградов, Русский язык, Москва, 1947, стр. 325.

² Նույն տեղում:

Ակադ. Վ. Վ. Վինոգրադովը այս տիպի բառերի միայն մի կողմն է դիտում, նշելով, որ նրանք սակավաթիվ են ուսեցնում, ինչպես և այլ լեզուներում: Նա մոռանում է սակայն հիմնականը, որ այդ բառերի տարբեր կիրառությունները դեռևս «դիմազուրկ» չեն արել նրանց, չեն կորցրել նրանց հիմնական նշանակությունը, այն, որ դրանք մեկ հիմնական իմաստ ունեցող գոյականների կամ այլ խոսքի մասերի տարբեր կիրառություններ են միայն: Ամեն մի ուսուսումնական իմացող այլազգի քաղաքացի իմ օրինակի դեպքում է նախ և առաջ «աշխատանք, զբաղմունք, այն, ինչով որևէ զբաղված է» (տես Толковый словарь русского языка под ред. Д. Н. Ушакова, 1934, т. I, стр. 680—681): Եվ ապա միայն նրա այլ երազները՝ անցք, դեպք, փաստ («Это дело случилось давно»), իրավասության սահմանները («Это дело милиции») և այլն: Парень նախ և առաջ նշանակում է «դեռահաս, պատանի, երիտասարդ մարդ» և ապա իր երկրորդական նշանակությամբ՝ ընդհանրապես մարդ, ընդհանրապես երիտասարդ մարդ՝ «Парень ты хороший» և այլն: Женщина բառի տակ յուրաքանչյուր մեկը նախ և առաջ հասկանում է իգական սեռի մարդ և ապա ընդհանուր առմամբ, իր երկրորդական նշանակություններով իրեն մեծ, տարիքով կին (ի տարբերություն «աղջկա») և այլն:

Ինչպես տեսնում ենք, գոյականը, ածականը և այլ խոսքի մասերը միայն փոխաբերարար կարող են դերանվանական իմաստ արտահայտել, իսկ հիմնականում նրանք պահպանում են իրենց լեզվական և ձևաբանական հաստատուն տեղը: Հայերեն «մարդ» բառը գործածվելով իրեն «ոմն», «ամեն ոք», «յուրաքանչյուրը» և այլ դերանունների իմաստով, դեռևս դերանուն չի դառնում, որովհետև նա դրանով չի կորցնում իր ընդհանուր, հիմնական իմաստն ու գոյական անվան քերականական ձևը:

Ս. Մալխասյանն, օրինակ, իր «Հայերեն բացատրական բառարանում» նախ և առաջ նշում է «մարդ» բառի հանրորեն գիտակցվող, ընդհանուր նշանակությունը, «Մարդ (ոյ, մարդը, ոց, ավելի սովորական մարդիկ, զկան) ... Ողնաշարավոր կաթնասուն կենդանի, երկու ձեռքով, երկու ոտքով, հինգ-հինգ մատներով, մատների ծայրերին տափակ եղունգներով, լայն ճակատով, բարձր կառավով, երկու ոտների վրա գազաթնաշաղկանգնող ու քայլող, երեք տեսակի ատամներով, որոնց թվը չափահասության ժամանակ հասնում է 32-ի (մոռանում է հիմնական հատկանիշը մարդու գործիք շինող բանական կենդանի լինելը — Բ. Վ.)» («Հայերեն բացատրական բառարան», հատ. 3, էջ 273):

Մինչդեռ ընդհանուր այլ ընդթիվ են դերանունները: Նրանցից յուրաքանչյուրը նախ և առաջ աչքի է զարնում իր վերին աստիճանի վերացականությամբ: Եվ ոչ մի դերանուն չի կարող ցույց տալ (ընդհանրապես, և ոչ թե առանձին դեպքերում) կոնկրետ, որոշակի տեսակի առարկա, առարկայի կամ գործողության հատկանիշ, թիվ, քանակ և այլն:

Ակադ. Վ. Վինոգրադովը առարկում է տարբեր իմաստ արտահայտող դերանունների մեկ խոսքի մասի մեջ համախմբելու դեմ նաև այն պատճառով, որ նրանք չունեն քերականական ընդհանուր, միասնական ձև և ըստ ձևի նման են գոյականին, ածականին, թվականին ու մակրային: Մեր կարծիքով համոզեցողիչ չէ հարգելի գիտնականի նաև այս պնդումը, որովհետև 1. Ձեր բովանդակության լոկ պայմանական արտահայտությունն է,

ըստ որում նույն ձևը ոչ սակավ դեպքերում կարող է ծառայել քերականական տարբեր կատեգորիաների արտահայտման, նրանց իմաստի դրսևորման համար: Այսպես օրինակ՝ հոլովումը, համաձայնումը թվով և սեռով՝ որպես քերականական ձև, ուսերենում հատուկ են ոչ միայն գոյականներին, այլև ածականներին ու թվականներին, սակայն այդ չի խանգարում, որպեսզի դրանք համարենք առանձին, ինքնուրույն խոսքի մասեր: Ըսկ ինչու, որովհետև դրանցից յուրաքանչյուրն արտահայտում է տարբեր իրահարաբերություններ, նյութական աշխարհի տարբեր իրողություններ (առարկա, առարկայի հատկանիշ և թիվ): 2. Միայն դերանունը չէ, որ իր մեջ համախմբում է քերականական տարբեր ձևի բառեր. օրինակ՝ հայոց լեզվի մեջ քերականական տարբեր ձևի են որակական և հարաբերական ու հատկացական ածականները. որակական ածականները ունեն համեմատության աստիճաններ (կարմիր, ավելի կարմիր, ամենակարմիր, դժվար, ավելի դժվար, ամենադժվար և այլն) և անմիջապես կապվում են այն առարկայի հետ, որի հատկանիշն են արտահայտում (կարմիր դրոշ, դժվար աշխատանք և այլն), իսկ հարաբերական և հատկացական ածականները չունեն համեմատության աստիճաններ և ոչ թե անմիջապես կապվում են որևէ առարկայի հետ, այլ ցույց են տալիս այդ առարկայի հարաբերությունը, հատկացումը մի այլ առարկայի (արծաթյա սուր, կավե գավաթ, հայրենական տուն, դպրոցական գրագրարան):

Որակական և հարաբերական ու հատկացական ածականները տարբեր են ըստ իրենց քերականական ձևի, բայց այդ չի խանգարում, որ ինչպես այլ լեզուներում, այնպես և հայերենում այդ բառերը գիտվեն իբրև մեկ խոսքի մաս: Պատճառը նորից նույնն է, նրանց արտահայտած իմաստի ընդհանրությունը, մասամբ նաև նախադասություն մեջ կատարած շարահյուսական նույն պաշտոնը:

Ավելին, ուսաց լեզվի մեջ կան մի շարք չհոլովվող բառեր, որոնք զուրկ են գոյական անվան մի շարք քերականական ձևերից, խոսքի մեջ իրենց լրացման կամ լրացյալի հետ չեն համաձայնում թվով, սեռով ու հոլովով, այնուամենայնիվ համարվում են գոյական: Այդպես են օրինակ. 1) օտար, մեծ մասամբ եվրոպական լեզուներից փոխառնված ձայնավորով վերջացող մի շարք բառեր՝ депо, пальто, пенсне, кофе, колыбы, кенгуру, 2) ձայնավորով վերջացող մի շարք փոխառյալ հատուկ անուններ՝ Гейне, Золя, Чикаго, 3) բաղաձայնով վերջացող մի շարք ազգանուններ և իշ վերջավորություններ ուսական ազգանուններ, եթե նրանք գործածվում են իգական սեռի մարդկանց համար, ինչպես՝ у гражданина Гофмана, Пушкаревича բայց՝ у гражданки Гофман, Пушкаревич, 4) չեն հոլովվում նաև բաղաձայն սկզբնատառերով կազմված նորագույն հապավումները ВЛКСМ, СССР, РСФСР և այլն¹:

Ինչու հապա այս բառերը չեն դասվում չթեքվող խոսքի մասերի՝ մակրայի, կապի, շաղկապի, ձայնարկության կամ մասնիկների շարքը, որովհետև իրենց արտահայտած իմաստով, իրենց բուն էությունը իսկ նրանք գոյականներ են, թեև ըստ քերականական ձևի ոչ մի ընդհանրություն չունեն:

¹ Տե՛ս Грамматика русского языка, под. ред. акад. Л. В. Щербы, ч. I, Москва, Учпедгиз, 1952, стр. 59.

նեն գոյականների հետ՝ (հաշվի չառնելով շարահյուսական դերի ընդհանրությունը)։

Ուրեմն՝ գոյական անունների մեջ (այդպես նաև ֆնացած խոսքի մասերի մեջ) նույնպես գոյություն ունի քերականական ձևերի բազմազանություն, սակայն այդ չի խանգարում որոշակիորեն ընդգծել նրանց սահմանները, տարրերակել միմյանցից։

Իհարկե, քերականական ձևերի բազմազանությունն տեսականորեն դերանունը ամենահարուստն է, և այդ, հարկավ, որոշ դժվարություն է առաջացնում։ Սակայն այդ մասնակի անհարմարությունը չի կարող խախտել այն միասնությունը, որ անշուշտ կա անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական և այլ դերանունների մեջ։ Ամենից առաջ այդ բոլոր դերանունները համատեղում են իրենց ընդհանուր բնույթով, իրենց արտահայտած տարրերի մաստների յուրօրինակությամբ, որը ոչ մի այլ խոսքի մասի հետ չի կարելի համեմատել։ Որոշ լեզվաբաններ, այդ թվում նաև ակադ. Վ. Վ. Վինոգրադովը, դերանվան խնդրում խուսափում են բառերի արտահայտած իմաստը հաշվի առնելուց, գտնելով, որ հակառակ դեպքում դերանունը կդառնա ոչ թե ձևարանական կատեգորիա, այլ լեզվական-սեմանտիկական միավոր։ Գերանունների միավորումը հնարավոր է լուրջ լեզվական-սեմանտիկական հատկանիշների հիման վրա¹, — գրում է ակադ. Վ. Վ. Վինոգրադովը։

Մինչդեռ անհրաժեշտ է ինչպես բոլոր խոսքի մասերի, այնպես էլ դերանվան որոշման խնդրում հաշվի առնել նաև բառի արտահայտած իմաստը։ Միայն բառերի քերականական ձևով առաջնորդվելը անխուսափելիորեն կառաջացնի խոսքի մասերի շփոթում, կհարկադրի գոյական, ածական, թվական անուններից ու այլ խոսքի մասերից բաժանել — առանձնացնել և իրեն առանձին խոսքի մասեր ընդունել այն բոլոր բառերը, որոնք իրենց քերականական ձևով չեն համապատասխանում բառերի այդ խմբերին։

Գերանունները և՛ իրենց արտահայտած իմաստով, և՛ ձևով առանձնահատուկ տեղ են գրավում խոսքի մասերի սխեմայում։ Ա. Մ. Պեշկովսկին խոսելով դերանունների արտահայտած իմաստի արատրակտ լինելու, նրանց ցույց տված առարկայական հարաբերությունների փոփոխական բնույթի մասին, այնուամենայնիվ, նկատում է, որ դերանունը միշտ էլ պահպանում է իր ինքնուրույնությունը և ցույց է տալիս ճայնպիսի մի բան, որը հնարավոր չէ արտահայտել որևէ այլ բառով²։

Այն բոլոր լեզվաբանները, որոնք դերանունն առանձին խոսքի մաս չեն համարում, միանգամայն հակառակ կողմից են մոտենում դերանուններին։ Նրանց կարծիքով դերանունն իմաստավորվում է լուրջ խոսքի մեջ՝ տարրեր կոնտեքստներում ցույց տալով զանազան իրահարաբերություններ։ Խոսքից դուրս նա տարտամ է, անորոշ և դժվար է որոշել նրա ձևարանական էությունը։ Բանավոր խոսքի մեջ պարագան, իրադրությունը և շարահյուսական-ֆրազեոլոգիական կապը, գրավոր խոսքի մեջ կոնտեքստն են որոշում դերանվանական բառերի իմաստը, կոնկրետ առարկաների և

¹ В. В. Виноградов, Русский язык, Москва, 1947, стр. 321.

² А. М. Пешковский, Наш язык, ч. III, стр. 81.

երևույթների նկատմամբ նրանց վերաբերությունը,—գրում է ակադ. Վ. Վ. Վինոգրադովը։ Հիմք ընդունելով դերանունների նկատմամբ այսպիսի մոտեցումը, իհարկե դերանունը հնարավոր չէ ինքնուրույն խոսքի մաս համարել, որովհետև կոնկրետ կիրառության մեջ նա իրոք կարող է հանդես գալ իբրև գոյականի, ածականի, թվականի ու մակրայի փոխանորդ և արտահայտել տվյալ կոնտեքստի մեջ հայտնի առարկա, առարկայի հատկանիշ և այլն։ Օրինակ. «Անկյունում դրված էր մի գրասեղան, որի վրա անկանոն թափված էին մի քանի գրքեր ու լրագրեր»։ Այս նախադասության մեջ «որ» հարաբերական դերանունը ցույց է տալիս կոնկրետ, հայտնի առարկա (գրասեղան), բայց չպետք է մոռանալ, որ այդ կոնտեքստից դուրս «որ» դերանունը բոլորովին էլ գրասեղան չի նշանակում, այլ առարկա ընդհանրապես՝ առանց տարբերակման։

Բ. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների հրապարակումից հետո ակադ. Վ. Վ. Վինոգրադովը որոշակիորեն փորձում է վերանայել դերանվան մասին իր նախկին կարծիքը, որ արտահայտվել էր «Современный русский язык», «Русский язык» և այլ աշխատություններում։ Դեռևս 1950 թ. հրատարակած իր հոդվածներից մեկում («Содержание и задачи курсов по языковедческим дисциплинам в свете работ И. В. Сталина по языкознанию») նա ոչ միայն հակված է դերանունը առանձին, ինքնուրույն խոսքի մաս համարելու, այլև գտնում է, որ արդի ուսերենում «դերանվանական բառերի որոշ խմբեր շարունակվում են համալրվել ձևաբանական, բառակազմական նոր տիպերով»։

Ակադ. Վ. Վ. Վինոգրադովը պահանջում է խորն ուսումնասիրել ինչպես այլ խոսքի մասերի, այնպես և դերանվան մեջ կատարված որոշ փոփոխությունները, որ կատարվել են ժամանակակից լեզուներում՝ բառային կազմի հարստացման ու մշակման հետևանքով։

Դերանվան բուն էությունը ըմբռնելու համար պետք է այդ բառերին մոտենալ նրանց վերադրության մեջ, հաշվի առնել նրանց արտահայտած իմաստի յուրահատկությունը ոչ թե բանավոր խոսքի կոնկրետ մոմենտում, կամ գրավոր խոսքի մեջ կոնտեքստում, այլ իր ամբողջությամբ։

«Բերականության տարրերից գիծն այն է, որ նա տալիս է բառերի փոփոխության կանոնները, նկատի ունենալով ոչ թե կոնկրետ բառերը, այլ ընդհանրապես բառերը, առանց որևէ կոնկրետության, նա կանոններ է տալիս նախադասությունների կազմելու համար, նկատի ունենալով ոչ թե ինչ-որ կոնկրետ նախադասություններ, ասենք կոնկրետ ենթակա, կոնկրետ ստորոգյալ և այլն, այլ ընդհանրապես ամեն տեսակ նախադասություններ, անկախ այս կամ այն նախադասության կոնկրետ ձևից»։

Եթե դերանունները քննարկենք իրենց ընդհանրության մեջ, «նկատի ունենալով ոչ թե կոնկրետ բառերը, այլ ընդհանրապես բառերը, առանց

¹ В. В. Виноградов, Русский язык, Москва, 1947, стр. 321.

² «Вопросы языкознания в свете трудов И. В. Сталина». Изд. МГУ, 1950, стр. 216.

³ Բ. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951, էջ 53։

որևէ կոնկրետություն ապա կնկատենք, որ դերանունները յուրահատուկ տեղ են գրավում խոսքի մասերի մեջ:

Դերանվան էությունը լիապես բացահայտում է Վ. Ի. Լենինը: Հեգելի փիլիսոփայության պատմության կոնսպեկտներում Վլադիմիր Իլյիչը գրում է. («Это? Самое общее слово) Кто это? Я. Все люди я. Das Sinnliche вообще? Это есть *общее* etc. etc. „Этот“? Всякий есть „этот“¹:

Վ. Ի. Լենինն այստեղ մատնանշում է դերանվան արտահայտած իմաստի վերին աստիճանի արտարկտ բնույթը, այն, որ յուրաքանչյուր դերանուն, յուրաքանչյուր «ես» և «սա» («այս») ցույց է տալիս ոչ թե որոշ տեսակի առարկա, այլ առարկա ընդհանուր ձևով, «զգայական ընդհանրապես» («Das Sinliche вообще»):

Եվ լեզվաբանները փոխանակ ելնելու դերանվան այս հիմնական առանձնահատկությունից, հիմք են ընդունում լոկ նրա շարահյուսական ֆունկցիան, այս կամ այն խոսքի մասին փոխարինելու պաշտոնը, վերջիվերջո հանգելով այն եզրակացության, որ դերանունը ինքնուրույն խոսքի մաս չէ (Ակսակով, Պավսկի, Դավիդով, Օլսյաննիկով-Չուլիկովսկի, Մ. Արեդյան և ուրիշներ) և կամ ընդունելով նրա՝ առանձին խոսքի մաս լինելը, կարծում են, որ այն կոչված է գոյականին, ածականին ու թվականին փոխարինելու համար (ակադ. Շչերբա, Ա. Այտընյան, Ս. Պալասանյան և ուրիշներ):

Դերանվան որոշման ու դասակարգման, անգամ նրա շարահյուսական բազմազան պաշտոնների բացատրման համար անհրաժեշտ է նկատի առնել այդ խոսքի մասի հիմնական առանձնահատկությունը, այն, որ դերանունները ցույց են տալիս չտարբերակված առարկաներ, առարկայի ու գործողության հատկանիշներ, թիվ ու քանակ: Այս տեսակետից ուրիշ ոչ մի խոսքի մաս չի կարելի համեմատել դերանվան հետ:

Դերանունները ցույց տալով «զգայական ընդհանրապես», խոսքի կոնկրետ մոմենտում, կոնկրետ կոնտեքստի մեջ կարող են փոխարինել առարկայի իմաստ արտահայտող յուրաքանչյուր անվան (բոլոր, մարդիկ «ես», «սա» են և այլն), յուրաքանչյուր ածականի, թվականի ու մակրայի: Շատ հաճախ նրանք հանդես են գալիս ինքնուրույնաբար, առանց որևէ խոսքի մասի փոխարինելու ֆունկցիայի և արտահայտում են այնպիսի գաղափարներ, որոնք որևէ այլ խոսքի մասով չի կարելի հաղորդել: Այդ մանավանդ վերաբերում է անորոշ, հարցական, հարաբերական, միտական ու փոխադարձ դերանուններին (բացառություն են կազմում անձնական և առարկա ցույց տվող ցուցական դերանունները, որոնք, ակնհայտորեն հանդես են գալիս գոյական անուններին փոխարինելու ֆունկցիայով):

Բերենք նախադասության մեջ դերանվան ինքնուրույն կիրառությունը ապացուցող մի քանի օրինակ՝ «Սամսոնը դեմ չէր դրան, թեև հոգու խորքում շատ էլ չէր համակրում նոր ծանոթներից ոմանց» (Շիրվանզադե, «Մեկանիա»): «Ուր որդիական արտասուք ու սեր, ուր ցավակցության դառն հառաչանքներ» (Ս. Շահադիզ, «Ազգային վիճակ»): «Զինվորները գրկում ու համբուրում էին միմյանց» (Հ. Քոչար, «Ծառավ»): «Ամոթ բան ա, ամենքն էլ կլսեն ու կծիծաղեն, էս լավ բան չի» (Պ. Պոռյան, «Հացի

¹ В. И. Ленин, Философские тетради, Огиз, 1947, стр. 258.

խնդիր»): «Այ՛ ոք չի լսում մեր ձայնը, ոչ ոք չի սրբում մեր արտասուքը» (Բաֆֆի, «Դավիթ բեկ»): «Եվ եթե որևէ նորմուծություն լինում էր, եթե երևում էին նոր դեմքեր, շուտով ձուլվում էին ու միանում հների հետ...» (Շիրվանզադե, «Ջուր հույսեր»):

Այսպես կարելի է հազարավոր օրինակներ բերել, ուր դերանուններն իրոք ցույց են տալիս յուրօրինակ, ինքնատիպ գաղափարներ, արտահայտում են այնպիսի նրբերանգներ, որոնք չեն կարող հաղորդել ոչ գոյականը, ոչ ածականը, ոչ էլ այլ խոսքի մասեր: Օրինակ՝ «միմյանց» դերանունը շատ հաճախ նախադասության մեջ գործածվում է իբրև երկու կամ ավելի գոյական անունների փոխանորդ, բայց իրոք այդ չէ նրա իմաստը, ինչպես՝ «Թող քույրիկս, այդ հիմարությունները, մենք իրար ճանաչում ենք և միմյանց չպիտի խաբենք» նախադասության մեջ: Այստեղ ոչ մի դեպքում «միմյանց» բառը չի կարելի փոխարինել «եղբայր ու քույր» բառերով (կամ կապակցությամբ), որովհետև գոյականներով չի կարելի հաղորդել բազմակի ենթակաների («քույր» ու «եղբայր») գործողության կատարման փոխադարձ հարաբերությունը, որը արտահայտված է «միմյանց» դերանվան միջոցով:

Դերանունն այսպիսով հանդիսանում է ինքնուրույն խոսքի մաս և՛ իր արտահայտած իմաստով, և՛ քերականական ձևով, որ բոլորովին էլ չի համընկնում գոյականի, ածականի, թվականի ու մակբայի հետ:

Հայ քերականության պատմության մեջ դերանվան տրադիցիոն սահմանումն առաջին անգամ վերանայել է պրոֆ. Գ. Սևակը «Խոսքի մասերի ուսմունքը» և «Հայոց լեզվի տեսություն» աշխատությունների մեջ: Նա գրում է. «Դերանուն կոչվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկա, հատկանիշ, թիվ և թվական կարգ, առանց տարբերակման՝ իբրև նրանց ընդհանուր անուն»:

Մեր կարծիքով այս սահմանումը լիովին արտահայտում է դերանվան առանձնահատկությունը և այն սահմանազատում մյուս խոսքի մասերից: Ոմանք կարծում են, թե այդ սահմանումը նպատակահարմար չէ օգտագործել միջնակարգ դպրոցի քերականության դասագրքերում, որ չարժե միանգամից հրաժարվել դերանվան տրադիցիոն սահմանումից: Մեր կարծիքով, ընդհակառակը՝ պետք է մի կողմ դնել այդ խոսքի մասի տրադիցիոն սահմանումն ու սխալ բացատրությունը և որքան շուտ կատարվի այդ, այնքան ավելի լավ՝ միջնակարգ դպրոցի աշակերտության համար, քերականության ուսուցման համար:

Ռուս քերականներ Զեմսկին, Կրյուչկովը և Սվետլյանը մանկավարժական ուսումնասիրանների համար կազմած դասագրքում այսպես են սահմանում դերանունը. «Դերանունն այնպիսի մի խոսքի մաս է, որն ընդգրկում է այնպիսի բառեր, որոնց օգնությամբ խոսողը ցույց է տալիս դեմքը, առարկան, հատկանիշը, թիվը, կամ հարցնում է առարկայի հատկանիշի, թվի մասին, բայց նրանց անունը չի տալիս»:

Պրոֆ. Ա. Ղարիբյանը նույնպես վերանայել է դերանվան տրադիցիոն սահմանումը. «Հայոց լեզվի քերականություն» դասագրքի 1949 թ.

¹ Գ. Սևակ, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939, էջ 132:

² А. М. Земский, С. Е. Крючков, М. В. Светляев, Грамматика русского языка, ч. 1, Учебник для педаг. училищ, Учпедгиз, 1948, стр. 120.

հրատարակության մեջ նա գրում էր. «Դերանունն կոչվում են այն բառերը, որոնք գործածվում են գոյականի, ածականի, թվականի և մակրայի փոխարեն՝ յուրաքանչյուրի ընդհանուր նշանակությամբ» (էջ 131)։ Այստեղ թեև մնում է դերանունների որոշման արագիցիոն մոտեցումը (անվան և մակրային փոխարինելու հանգամանքը) բայց, այնուամենայնիվ, փորձ է արվում ցույց տալու նաև դերանունների արտահայտած իմաստի յուրահատկությունը, նրա ընդհանուր, վերացական բնույթը. Հետագայում նա ավելի մեծ ուշադրություն է դարձնում դերանվան այդ առանձնահատկության վրա. «Այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկա, որպիսություն, թիվ և գործողության հատկանիշ ընդհանրապես, առանց կոնկրետության, կոչվում են դերանուն»։

Սակայն պրոֆ. Ա. Ղարիբյանը փոխանակ ավելի խորացնելու այս ճիշտ գիտական սահմանումը, անմիջապես դիմում է դերանվան տրագիցիոն ըմբռնմանը. «Դերանունները փոխարինում են գոյականներին, ածականներին, թվականներին կամ մակրայներին։ Սովորաբար դերանունները, քիչ բացառությամբ, դրվում են նախորդ նախադասություններում արդեն գործածված կամ խոսողին ու խոսակցին հայտնի գոյականի, ածականի, թվականի և մակրայի փոխարեն»։

Հակասությունն ակնհայտ է։ Մի կողմից դերանունն իրավացիորեն դիտվում է որպես ինքնուրույն խոսքի մաս, որ ցույց է տալիս առարկա, որպիսություն, թիվ և գործողության հատկանիշ ընդհանրապես, մյուս կողմից այն դիտվում է որպես առարկա, թիվ և առարկայի գործողության հատկանիշ ցույց տվող խոսքի մասերի՝ գոյականի, ածականի, թվականի և մակրայի փոխանորդ։

Ցավոք սրտի, հայոց լեզվի քերականության գործնական ձեռնարկներին շատ հեղինակների մոտ մինչև այժմ էլ դեռ չկա միօրինակություն քերականական մի շարք կառուցողականների, այդ թվում նաև դերանվան սահմանումի և բացատրման մեջ։

Դերանվան լեքսիկական և քերականական արժեքի պարզաբանումը, այդ ինքնատիպ խոսքի մասի ճիշտ սահմանումն ու դասակարգումն ունի գործնական և տեսական մեծ նշանակություն, ուստի և հարկ է, որ այդ հարցերով ավելի շատ զբաղվեն սովետական լեզվաբանները։

¹ Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասագիրք, Երևան, 1952, էջ 209։